# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թ-ի ապրիլի 22-ին, ժամը 11-ին Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 3 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թ-ի հունվարի 31 -Ի N 62 -Ն որոշմամբ իրականացվող՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2019 թ-ի պետական բյուջեի միջոցների համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին
3. Համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

1. Լսեցին նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

*(Զեկ՝ Ն. Մալխասյան)*

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը, Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով

Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 7

Հաստատել 22.04.2019 թվականի ավագանու նիստի օրակարգը.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

2.Լսեցին--- . Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թ-ի հունվարի 31 -ի N 62 –Ն որոշմամբ իրականացվող՝ ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2019 թ-ի պետական բյուջեի միջոցների համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին

(զեկ Ն. Մալխասյան)

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31–ի N 62 –Ն որոշումը և Դաշտաքար համայնքում 19.04.2019թ-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 8

Նպատակահարմար համարել համայնքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2019 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N 62 -Ն որոշմամբ սահմանված կարգով

ՀՀ Արարատի մարզպետարան ներկայացնել գազաֆիկացման,ասֆալտապատման ծրագրերի սուբվենցիաների ամբողջական փաթեթները:

**3. Լսեցին — Համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը:**

**(զեկուցող՝ Ն. Մալխասյան)**

Արտահայտվեցին ավագանու անդամներ Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ավագանին որոշեց.

**ՈՐՈՇՈՒՄ 9**

1. Ֆոնդային բյուջեի Նախադպրոցական ուսուցում, գործառնական դասակարգման ծրագրի 5122 հոդվածից հատկացնել ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում գործառնական դասակարգման ծրագրի 5113 հոդվածին՝ 1 953 200 ՀՀ դրամ և 300 000 ՀՀ դրամ նաև ծրագրի 5134 հոդվածին:
2. Ֆոնդային բյուջեի Նախադպրոցական ուսուցում գործառնական դասակարգման ծրագրի 5122 հոդվածը սահմանել՝ 1 096 800 ՀՀ դրամ

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Արոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Ամփոփելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար Ն. Մալխասյան

Աշխ. քարտուղար Ա. Վարդանյան